ՍՈՎՈՐՈՂԻ ԻՆՔՆՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

ՀԱՍՏԱՏՎԱԾ 12.01 .2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Փիլիսոփայություն 3
2. Նպատակներ 3
3. Կազմակերպման ընթացակարգ 3
4. Հաշվառում 5
5. Գնահատում 5
6. Ամփոփում 5
7. Ձախողման ընթացակարգ 5
Հավելված 1. Ծնողի/ սովորողի դիմումի ձևանմուշ 6
Հավելված 2. Երաշխավորագիր 7
Հավելված 3. Ինքնուսուցման արդյունավետ ռազմավարություններ 10
Հավելված 4. Ինքնուսուցման ձախողման ընթացակարգ 11
Հավելված 5. Ֆիզկուլտուրա առարկայի ինքնուսուցման կազմակերպում 12
Աղբյուրներ 13

1. Փիլիսոփայություն

1.1. Ինքնուսուցումը ուսանողի՝ սեփական ձգտումով և ինքնուրույնաբար ընտրած միջոցներով, առարկայական ծրագրով նախատեսված ուսումնական նյութի ուսումնասիրության, գիտելիք և փորձ ձեռք բերելու գործընթաց է: Ինքնուսուցման գործընթացում ձեռք բերած գիտելիքի որակը կախված է ուսանողի ցանկությունից (մոտիվացիայից), ինքնակազմակերպման հմտություններից, ուսումնասիրվող նյութի մատչելիությունից և ծավալից, ինչպես նաև դասավանդող ուսուցչի կողմից ճիշտ ուղղորդումից:

1.2. Ինքնուսուցման կազմակերպման ընթացակարգը կանոնակարգվում է հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հուլիսի 20-ի N 54-Ն հրամանի 35-րդ մասի 10-րդ և 15-րդ կետերը և “Շիրակացու ճեմարան” միջազգային գիտակրթական համալիրի կրթական ծրագրի դրույթները:

1.2.1. Ինքնուսուցման կազմակերպումը “Մասնագիտացված հանրակրթական և միջազգային բակալավրիատի ինտեգրված ծրագրի իրականացման պայմանագրի” համաձայն սահմանված վարձավճարի փոփոխություն չի ենթադրում:

2. Նպատակներ

Ինքնուսուցման նպատակներն են.

2.1. յուրաքանչյուր ուսանողի համար նախանշել նրա կարիքներին և հնարավորություններին համապատասխան բովանդակային ծավալ ու վերջնարդյունքներ.

2.2. սահմանել անհատական ուսումնական նպատակներ և դրանց հասնելու ժամկետներ.

2.3. ընտրել ուսումնառության առավել հարմարավետ և արդյունավետ ձևեր ու եղանակներ.

2.4. զարգացնել ուսանողի ինքնուրույնության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման հմտությունները.

2.5. ուսանողների մոտ զարգացնել որոշումներ կայացնելու և դրանց համար պատասխանատվություն կրելու հմտությունները:

3. Կազմակերպման ընթացակարգ

3.1. Ինքնուսուցում կարող է կազմակերպվել

3.1.1. ԱԴ-ի 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում այն խորացված առարկաներից, որոնցից ուսանողը միասնական քննությունների առաջին փուլի արդյունքում վաստակել է 18 և ավելի միավոր.

3.1.2. ԱԴ 12-րդ դասարանում անգլերեն առարկայից TOEFL քննության 85 և ավելի կամ IELTS քննություն՝ 7 և ավելի միավորներ վաստակելու դեպքում.

3.1.3. հենքային ուսուցմամբ ոչ ավելի, քան երկու առարկաներից* (տե՛ս "ԱԴ ՀԾ խորացված ուսուցման կազմակերպման կարգ", կետ 5.1) և/կամ մեկ խորացված ուսուցմամբ առարկայից՝ 3.5 կետի պահանջների բավարարման դեպքում.

3.1.4. 11-րդ դասարանցիները կարող են անցնել ինքնուսուցման մանկավարժական առաջնորդության որոշման և տնօրենության խորհրդի հաստատման դեպքում՝ ապահովելով ընթացակարգային կետերը, շաբաթական առավելագույն 8 դասաժամ ծանրաբեռնվածությամբ:

3.1.5. Ինքնուսուցման շաբաթական ընդհանուր ծանրաբեռնվածությունը 12-րդ դասարանում չպետք է գերազանցի 16 դասաժամը:

3.2. Ինքնուսուցումը ենթադրում է հետևյալ ընթացակարգը.

3.2.1. Ծնողը գրավոր դիմում է ներկայացնում ավագ դպրոցի (ԱԴ) համակարգողին ինքնուսուցման կազմակերպման հայցով՝ նշելով տվյալ տարիքային խմբի ուսումնական պլանում ներառված այն առարկան, որից ցանկանում է, որ ուսանողի համար կազմակերպվի ինքնուսուցում և ինքնուսուցման ժամկետները (տե՛ս Հավելված 1.):

3.2.2. Դասավանդող ուսուցիչը, խմբի մանկավարժը և հոգեբանը ներկայացնում են գրավոր կարծիք-երաշխավորագիր ինքնուսուցման կազմակերպման վերաբերյալ (տե՛ս Հավելված 2: Եթե ուսուցիչը նախկինում չի դասավանդել տվյալ ուսանողին, ապա կարծիք կարող է ներկայացնել նախորդ տարում/կիսամյակում դասավանդած ուսուցիչը: Անհրաժեշտության դեպքում ընդունելի է նաև գիտելիքի ստուգում դասավանդող ուսուցչի և/կամ ամբիոնի ղեկավարի կողմից՝ օբյեկտիվ կարծիք ներկայացնելու համար:

3.2.3. Ծնողի դիմումը բավարարվում է, եթե ուսանողի հմտությունների գնահատման արդյունքում գումարային միավորը 22-30 միջակայքում է, այսինքն, ուսանողի հմտությունները "կիրառող" կամ "գիտակ" մակարդակում են:

3.2.4. Դիմումին դրական պատասխանելու դեպքում տրվում է համապատասխան հրաման, որի հիման վրա ուսուցիչը ուսանողին տրամադրում է նշված ժամանակահատվածի համար նախատեսված ուսումնական նյութը, գիտելիքի ստուգման ժամանակացույցը,

ձևավորող և ամփոփիչ աշխատանքների հանձնման ձևաչափը՝ ներկայացնելով հեռավար կրթության նախընտրելի հարթակը (տե՛ս Հավելված 2.)։

3.2.5. Հարցերի դեպքում ուսանողը կարող է ներկայանալ առկա դասերին՝ թեմայի կրկնությանը նվիրված դասաժամերին։

3.2.6. Ինքնուսուցում կարող է կազմակերպվել նաև դասավանդող ուսուցչի ներկայացրած կարծիքի հիման վրա՝ ուսանողի և ծնողի համաձայնության դեպքում, պահպանելով 3.1. կետի պահանջները։

3.2.7. Ինքնուսուցման անցնելու դեպքում ուսանողին կարող է թույլատրվել տնօրինելու ազատ դասաժամերը ինչպես իր կամ ծնողի նախընտրությամբ, այնպես էլ ամբիոնի կամ տնօրենության առաջարկով (մասնակցություն ամբիոնային աշխատանքերին, նախագծերի իրականացում, աշխատանքային գործունեության ժամերի ավելացում և այլն)։

4. Հաշվառում

4.1. Ինքնուսուցմամբ կազմակերպվող առարկայի ժամաքանակը մտնում է ուսանողի շաբաթական ծանրաբեռնվածության մեջ։

4.2. Ուսանողը ներառվում է խմբային մատյանում, որտեղ մուտքագրվում են գնահատման միավորները, բայց ոչ հաճախումները։

5. Գնահատում

5.1. Ուսանողի գնահատումն իրականացվում է ԱԴ գործող գնահատման քաղաքականության համաձայն:

5.2. Հեռավար ուսուցման հարթակով և գնահատվող աշխատանք(ներ)ի բնույթով պայմանավորված՝ ձևավորող/միավորային աշխատանքները կարող են իրականացվել հեռավար կամ առկա ձևաչափերով:

5.3. Առկա իրականացվող ձևավորող/միավորային գնահատումը կազմակերպվում է ԱԴ-ի միավորային աշխատանքների լրացման օրերին կամ առկա դասաժամերին՝ ուսուցչի և ուսանողի փոխահամաձայնությամբ:

6. Ամփոփում

6.1. Կիսամյակի ամփոփումն իրականացվում է ԱԴ գործող գնահատման քաղաքականության համաձայն:

7. Չախողման ընթացակարգ

7.1. Ինքնուսուցման գործընթացում ծագած դժվարություններն արձանագրվում և ստանում են համապատասխան արձագանք՝ համաձայն Հավելված 4-ի:

7.2. Ինքնուսուցումը կարող է դադարեցվել՝

7.2.1. ծնողի դիմումի համաձայն

7.2.2. ուսուցչի/ամբիոնի կողմից ինքնուսուցման ցածր մակարդակի արձանագրման դեպքում (ձևավորող և/կամ թեմատիկ աշխատանքների անբավարար գնահատականներ կամ ժամկետների չպահպանման դեպք(եր)), հաշվետվությունների բացակայություն դեպքում:

7.3. Սույն կարգով չնախատեսված դեպքերը քննարկվում են տնօրենության փոքր խորհրդում:

Հավելված 1. Ծնողի/ սովորողի դիմումի ձևանմուշ

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի ԱԴ ՀԾ-ի

համակարգող_____-ին

_____խմբի ուսանող/ ծնող _____-ից

Դիմում

Հարգելի՛ _____, խնդրում եմ դստերս/որդուս՝ _____խմբի ուսանող_____-ի համար 20__-20__ ուստարվա առաջին/ երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպել ինքնուսուցում _____ առարկայից, քանի որ (նշել պատճառը)

_____

_____:

Սույնով հաստատում եմ, որ ծանոթացել եմ Ավագ դպրոցի սովորողի ինքնուսուցման կազմակերպման կարգին:

Դիմող՝_____

Ամիս/ամսաթիվ

Հավելված 2. Երաշխավորագիր

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԱԴ ՈՒՍԱՆՈՂԻ ԻՆՔՆՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ

Ուսանողի անուն ազգանուն

_____

Ուսանողի ուսումնական բնութագիր

Հմտություններ				
Ինքնակազմակերպում	սկսնակ	սովորող	կիրառող	գիտակ
Պատասխանատվության, կարգապահության և ճշտապահության մշակույթի պահպանման սկզբունքայնություն				

ժամկետների սահմանում և հստակ պահպանման վերահսկում				
Նախաձեռնողականության դրսևորում				
Սահմանված նպատակներին հետևողականորեն հասնելու կարողություն				
Ակադեմիական ազնվության պահպանում				
Համագործակցություն				
Արդյունավետ համագործակցություն խմբի հետ				
Հարգանքի դրսևորում				
Նոր գաղափարների և առաջարկությունների ընդունում				
Արդյունավետ բանակցում				
Ապրումակցում				
Սեփական պատասխանատվության գիտակցում				
Դասընկերներին քաջալերում				
Հաղորդակցում				
Բանավոր խոսքի արդյունավետ կիրառում				
Գրավոր խոսքի արդյունավետ կիրառում				

Բանավոր և գրավոր եզրահանգումներ կատարելու կարողություն				
Տեղեկատվության տրամաբանական և կազմակերպված ներկայացում				
Հետազոտում				
Հետազոտական հարցի ձևակերպում				
Վարկածների ձևակերպում				
Հետազոտության պլանավորում				
Աշխատանք տարբեր աղբյուրների հետ				
Տվյալների հավաքագրում և մշակում				
Հղումներ կատարելու կարողություն				
Մտածականություն հմտություն				
Փաստերի և փաստարկների գնահատում				
Պատճառահետևանքային կապերի բացահայտում				
Եզրահանգումներ և ընդհանրացումներ կատարելու կարողություն				
Տարաբնույթ համատեքստում տարբեր տեսանկյունների քննարկում				
Առարկայական խմբերի միջև կապերի բացահայտում				

Խնդրի լուծման բազմակողմանի մոտեցում				
Ձեռքբերած գիտելիքների կիրառում նոր տեխնոլոգիաների ուսումնասիրման համար				

Լրացնել ուսանողի հմտությունները գնահատող աղյուսակը:

Գումարային միավոր՝ _____:

Հմտությունների գնահատման բանալի/բնութագրիչներ		
Անբավարար	1 (0,25 միավոր)	Ուսանողն ունի զգալի դժվարություններ հմտության կիրառման հարցում: Դրսևորում է խիստ սահմանափակ /նվազագույն առաջընթաց նպատակադրմանը հասնելու համար: Միայն օգնության դեպքում է կարողանում իրավիճակին կամ սահմանված նպատակին լուծում տալ:
Բավարար	2 (0,5 միավոր)	Ուսանողն ունի որոշակի դժվարություններ հմտության կիրառման հարցում: Սահմանված նպատակին հասնելու համար դեռևս լրացուցիչ աջակցության կարիք ունի:
Լավ	3 (0,75 միավոր)	Ուսանողը դրսևորում է հմտության արդյունավետ կիրառություն թե ծանոթ, իսկ երբեմն էլ անծանոթ իրավիճակներում: Երբեմն ցուցադրում է ինքնատիպ/ստեղծարար, խորաթափանց և վերլուծական մոտեցում նպատակին հասնելու համար:
Գերազանց	4 (1 միավոր)	Ուսանողը հմտության ստեղծարար կիրառություն ինչպես ծանոթ, այնպես էլ անծանոթ իրավիճակներում: Մշտապես ցուցադրում է ինքնատիպ/ստեղծարար, խորաթափանց և վերլուծական մոտեցում նպատակին հասնելու համար և աշխատանքներն աչքի են ընկնում բարձր որակով:

Կարծիք

_____
_____
_____:

Ուսուցիչ՝ _____

Մանկավարժ՝ _____

Հոգեբան՝ _____

Հավելված 3. Ինքնուսուցման արդյունավետ ռազմավարություններ

Ինքնուսուցման արդյունավետությունը հեռավար կրթության տեսանկյունից դիտարկելու պարագայում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երկու հանգամանքի՝ (1) ուսումնական նյութերի հասանելիություն և կառավարում, (2) թվային ուսումնական նյութերի ճշգրիտ կազմում։

1. Ուսումնական նյութերի հասանելիությունն և կառավարումը ապահովելու նպատակով կիրառվում է Moodle հարթակը, իսկ ուղիղ նամակագրական կապի դեպքում Microsoft-ի outlook.office ծրագիրը։
2. Ճշգրիտ թվային ուսումնական նյութեր կազմելիս անհրաժեշտ է ուղղորդվել հեռավար ուսուցման համար նախատեսված ուսումնական նյութերի ստեղծման ձևաչափի։


Ինքնուսուցման ձախողման ընթացակարգ
Սովորողը չի կատարել հանձնարարությունը
Վերանայել աշխատանքը
Սովորողը չի հետևել նոր վերջնաժամկետին
Հրավիրել հանդիպման՝ դուրս բերելու պատճառները
Ուսուցչի նկատողություն
Ծրագրի վերանայում
Սովորողը չի աշխատում ուսուցչի նկատողությունից հետո
Սովորողի արձանագրած միավորները բացասական են
Տեղեկացնել ծնողներին
Ծրագրի համակարգողի նկատողություն
Ծրագրի դադարեցում
Սովորողը շարունակում է չկատարել առաջադրանքները և/կամ արձանագրած արդյունքները բացասական են
Ծնողը և սովորողը հրավիրվում են հանդիպման
Ինքնուսուցման դադարեցում
Սովորողը ներառվում է համապատասխան խմբում

Հավելված 5. Ֆիզկուլտուրա առարկայի ինքնուսուցման կազմակերպում

Ավագ դպրոցում ֆիզկուլտուրա առարկայից արտադասարանային ինքնուսուցման կարող են անցնել 12-րդ դասարանցիները, երկրորդ կիսամյակում: Ինքնուսուցման անցնելու համար ուսանողը/ծնողը պետք է մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը Ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոն ներկայացնի.
ա) գրավոր քաղվածք՝ մարզասրահ հաճախելու դեպքում մուտքերի և ելքերի արձանագրությամբ:
բ)գրավոր տեղեկանք՝ մարզադպրոց կամ խմբակ հաճախելու դեպքում ՀՀ-ում գործող ազգային ֆեդերացիաներում մարզումների վերաբերյալ:

Մարզասրահ հաճախելու ծանրաբեռնվածությունը 12-րդ դասարանցիների համար պետք է շաբաթական կազմի նվազագույնը 70 րոպե՝ ապահովելով հաճախումների համաչափ բաշխվածություն (տե՛ս ԿԳՄՄՆ Հրաման 54 առ 21.07.2021):

Կիսամյակային ամփոփումներն իրականացվելու նպատակով կիսամյակի վերջում երկշաբաթյա ժամանակահատվածում կկազմակերպվեն նորմատիվային պահանջներն ապահովող գնահատումներ՝ «Մարմամարզություն» և «Աթլետիկա» բաժիններից, որը ներառում է.

- Վազք 30մ,
- Վազք՝ տղաները 1000մ, աղջիկներ 500 մ,
- Հեռացատկ տեղից,
- Ձգումներ՝ տղաները կախ դրությունից, աղջիկները մարզանստարանին հենված:

Գնահատումը իրականացվում է համաձայն գործող նորմատիվային պահանջների և սանդղակների:
Ֆիզիկական ակտիվության տեսակներ են համարվում «Մարմամարզություն», «Աթլետիկա» և «Մարզախաղեր» բաժիններին պատկանող այն մարզաձևերը և մարզախաղերը, որոնց ֆեդերացիաները գրանցված են ԿԳՄՍ Մարզաձևերի Ազգային Ֆեդերացիաների, ՀՀ Ազգային Օլիմպիական կոմիտեի կազմում, կամ գոյություն ունեն որպես առանձին ՀԿ և Ֆեդերացիաներ:
ՀՀ գործող մարզաձևերի ազգային ֆեդերացիաներ
ՀՀ Ազգային օլիմպիական կոմիտե
Օրինակ՝ Աէրոբիկա, ԱկվաաԷրոբիկա, Ակրոբատիկա, Բադմինտոն, Բասկետբոլ, Բռնձքամարտ,Հեծանվասպորտ, Վոլեյբոլ, Ըմբշամարտ, Յոգա, Ֆուտբոլ, Թենիս, Սեղանի թենիս, Հանդբոլ, ֆուտզալ, Պադել, Ծանրամարտ, Կառատե (բոլոր տարատեսակները), Մարտարվեստ

(բոլոր տեսակները), Լող, Ջրացատկ, Ջրագնդակ, Սուսերամարտ, Սպորտային պարեր, Դյուդո, Դահուկային սպորտ և այլ հայտնի մազաձևեր:

Աղբյուրներ

Jon Curtis-Brignell.” Independent Learning Policy”. (2020)

Lisa McKeon Joassaint 7 min read, et al. “10 Student Reflection Prompts for ATL Skills: Toddle.” *Toddle Learn*, 24 Aug. 2022, https://learn.toddleapp.com/blog_post/10-student-reflection-prompts-for-atls/.

Safapour, Elnaz, Sharareh Kermanshachi, and Piyush Taneja. "A review of nontraditional teaching methods: Flipped classroom, gamification, case study, self-learning, and social media." *Education Sciences* 9.4 (2019): 273.

Кирикович Т.Е. "Методологические основы самообучения школьников" Наука и школа, no. 5, 2013, pp. 52-55.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հուլիսի 20-ի N 54-Ն հրաման

Կազմեցին՝

Ավագ դպրոցի հեղինակային ծրագրի համակարգող՝	Արուսյակ Արզումանյան
Ուսումնամեթոդական գծով փոխտնօրեն՝	Աննա Ստեփանյան
Հոգեբանական կենտրոնի ղեկավար՝	Անի Հարությունյան
Կրթական ծրագրերի զարգացման գծով փոխտնօրեն՝	Գագիկ Թոռչյան
Հեռավար ուսուցման համակարգող՝	Ռոզա Ջելադյան
Ֆիզկուլտուրայի և առողջ ապրելակերպի ամբիոնի ղեկավար՝	Գոհար Հովհաննիսյան